Հատուկ կարծիք
թիվ ՀԿԴ/0011/02/22 քաղաքացիական գործով

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ՀԿԴ/0011/02/22
Նախագահող դատավոր՝ Գ. Հարությունյան

Քաղաքացիական գործ թիվ **ՀԿԴ/0011/02/22**
2024թ.

02.05.2024 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2024 թվականի մայիսի 02-ին գրավոր ընթացակարգով քննելով Հասմիկ Պավլիկի Աբգարյանի վճռաբեկ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.10.2023 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության հայցի ընդդեմ Արամ Խաչիկի Հարությունյանի, Հասմիկ Պավլիկի Աբգարյանի, Արշակ Նորիկի Ջավադյանի, երրորդ անձինք «Հանարդնախագիծ» ԲԲ ընկերության, «Նաիրի ՃՇՇ» ԲԲ ընկերության, «Ինկոմսպասարկում» ԲԲ ընկերության, «Ռեժանս» ՍՊ ընկերության, «Հարազատ օջախ» ՍՊ ընկերության՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության ապօրինի ծագում ունեցող գույքերի բռնագանձման պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել, ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 06.10.2023 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի դատավորներ Արթուր Դավթյանս և Արման Կուրեխյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման (այսուհետ՝ Որոշում) վարույթ ընդունելու հիմքերի և հիմնավորումների, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի, ինչպես նաև ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի 7-րդ մասի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդիր առկա լինելու մասին Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը այդ որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

Հատուկ կարծիքը շարադրելիս հաշվի են առնվել վճռաբեկ բողոքի՝ Որոշման մեջ ներկայացված հիմքերը, հիմնավորումները և բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հասմիկ Աբգարյանի ներկայացուցիչը Դատարանին միջնորդել է «Կոնցեռն-Դիալոգ» ՓԲ ընկերության և Հասմիկ Աբգարյանի միջև կնքված փաստաբանական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի

շրջանակներում մատուցված ծառայությունների գծով առկա պարտքի՝ 16.036.619 (տասնվեց միլիոն երեսունվեց հազար վեց հարյուր տասնինը) ՀՀ դրամի չափով վերացնել Հասմիկ Աբգարյանի դրամական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը (թույլ տալ «Այդի Բանկ» ՓԲԸ-ի 33510000156066 հաշվի մնացորդ գումարից նշված չափի գումարն ուղղել պարտքի մարմանը), ինչպես նաև թույլատրել «Այդի Բանկ» ՓԲԸ-ի 33510000156066 հաշվի մնացորդ գումարի որպես ավանդ ներդրումը՝ նաև դրան հաշվեգրվող տոկոսները հետագայում առաջացվելիք փաստաբանական ծախսերը հոգալուն ուղղելու նպատակով: Դատարանի 13.09.2023 որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

Վերաքննիչ դատարանը 06.10.2023 թվականի որոշմամբ մերժել է Դատարանի 13.09.2023 որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը՝ պատճառաբանելով, որ «Տվյալ դեպքում (...) վերաքննիչ բողոք է ներկայացվել հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու միջնորդությունը մերժելու Դատարանի որոշման դեմ, մինչդեռ հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու միջնորդությունը մերժելու որոշման բողոքարկման հնարավորությունը գործող օրենսդրությամբ նախատեսված չէ: Նկատի ունենալով, որ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման»:

Վճռաբեկ դատարանը Հասմիկ Աբգարյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի սահմանված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառած դատավարական իրավունքի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի, ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի իմաստներով հայցի նախնական ապահովման (այդ թվում՝ հայցի ապահովման) միջոցը լրիվ կամ մասնակի վերացնելը մերժելու վերաբերյալ Դատարանի կայացրած դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «...ինչպես Օրենսգրքով, այնպես էլ Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հայցի նախնական ապահովման միջոցը (այդ թվում՝ հայցի ապահովման միջոցը) լրիվ կամ մասնակի վերացնելը մերժելու վերաբերյալ կայացված ակտի բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ: Վճռաբեկ դատարանն անվերապահորեն հիմք է ընդունում օրենսդրի նպատակը, ըստ որի՝ Օրենսգիրքն ընդունելուց հետո, ընդունելով նաև Օրենքը, հայցի ապահովման միջոցը վերացնելու մերժման որոշումները

բողոքարկելու կարգ, այնուամենայնիվ, չի սահմանել, ինչով վերադաս դատական ատյանին թույլ չի տվել վերաքննության կարգով քննության առնել այդ որոշումները»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել են առաջին ատյանի դատարանի այն դատական ակտերը, որոնք գործին մասնակցող անձինք իրավունք ունեն բողոքարկելու վերաքննության կարգով: Միաժամանակ, այդ ցանկը սպառիչ չէ, և օրենսդիրը նախատեսել է թվարկվածից բացի այլ որոշումների բողոքարկման հնարավորություն, սակայն միայն այն դեպքում, երբ դա ուղղակիորեն նախատեսված է օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով օրենսդիրը նախատեսել է հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության դատավարական կարևոր միջոց, այն է՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն: Դրա հետ մեկտեղ, հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորություն թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, թե՛ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» և այլ օրենքով նախատեսված չէ:

Վերը հիշատակված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ եթե վերաքննության կարգով բողոքարկվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած՝ հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու որոշումը, ապա նման բողոքի ընդունումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով ենթակա է մերժման:

Սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն *(տե՛ս Սահմանադրական դատարանի 09.04.2007 թվականի թիվ ՍԴՈ-690 որոշումը):*

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: *(տե՛ս Եվրոպական դատարանի Էշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 28.05.1985 թվականի վճիռը):*

Համաձայն լինելով Դատարանի որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու մասին դատավորների մեծամասնության դիրքորոշման հետ, այնուամենայնիվ կարծում ենք, որ վերը նշված նորմերն իրենց համակցության մեջ վերլուծելու արդյունքում միակ հնարավոր եզրահանգումը կարող է լինել հենց այն, որ նշված որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ:

Միաժամանակ գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանի որոշումը նշված նորմի՝ նախկինում տրվածից տարբերվող այլ մեկնաբանությամբ կիրառելու, օրենսդրական բացը լրացնելու, նորմի մեկնաբանության նկատմամբ այլ դիրքորոշում հայտնելու հիմնավորումներ չի պարունակում, հետևաբար տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի զարգացման խնդիր առկա չէ:

Անդրադառնալով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի վերաբերյալ Որոշմամբ արտահայտած դիրքորոշմանը, հարկ ենք համարում նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 388-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննում է Վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

Նշված հոդվածի իրավական կարգավորումից բխում է, որ Վճռաբեկ դատարանը կարող է վերանայել Վերաքննիչ դատարանի դատական ակտերը այն հիմքերով, որոնք կարող են ապահովել օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառումը կամ ուղղված լինել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելուն:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Դատարանի 13.09.2023 թվականի «Հայցի ապահովման միջոցը մասնակի վերացնելու մասին» որոշումը վարույթ ընդունելը՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չլինելու հիմքով, իրավաչափորեն չի անդրադարձել և քննության առարկա չի դարձրել Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումներին և դրանց մասով որևէ դիրքորոշում չի հայտնել կամ եզրահանգման չի եկել:

Վճռաբեկ դատարանը Որոշմամբ արձանագրել է, որ «(...) Դատարանը համաչափության սահմաններում, օգտվելով իր հայեցողությունից, որոշում է մասնակի վերացնել կիրառված հայցի ապահովումը և ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքն ազատել արգելադրումից՝ անձի կողմից փաստաբանի ծախսերը հոգալու համար, ապա Դատարանը չի կարող չանդրադառնալ փաստաբանական ծախսի ողջամտության հարցին: Օրենսդրի կողմից Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում «փաստաբանական ծախսերը» հասկացությունից առաջ «ողջամիտ» բառի չօգտագործումը չի նշանակում, որ Դատարանը պետք է բավարարի ցանկացած գումար, որը կպահանջի անձը՝ ներկայացնելով համապատասխան փաստաբանական ծառայությունների մեկ կամ մի քանի պայմանագրեր կամ գործում ներգրավելով մեկ կամ մեկից ավելի փաստաբաններ»:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի մասի մեկնաբանության՝ փաստաբանական ծախսերի ողջամտության վերաբերյալ դատավորների մեծամասնության արտահայտած դիրքորոշման հետ ըստ էության համաձայնելով հանդերձ գտնում ենք, որ Վճռաբեկ դատարանը, օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթն իրացնելիս, իրավասու չէր գնահատական տալ Դատարանի կողմից Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման օրինականությանը և իրավաչափությանը, նկատի ունենալով որ Վերաքննիչ դատարանի բողոքարկված դատական ակտում նշված նորմը չի կիրառվել և դրա վերաբերյալ դիրքորոշում չի արտահայտվել:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի և Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայության հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը բացակայել են:

Դատավոր՝ ***Ա. ԴԱՎԹՅԱՆ***

Դատավոր՝ ***Ա. ԿՈՒՐԵԽՅԱՆ***